ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 7 – Ա 16 հունվարի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» N 41-Ա որոշման 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6.1-րդ կետի պահանջները

Կարգադրում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և

սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Недействительная подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: Ekeng CJSC

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2019 թ. Հունվարի 16-ի
N 7-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց.մրցույթների ժամանակացույց

1. <<Վաղաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. մարտի 15-ին, ժամը՝ 10^{30}-ին
2. <<Ծակքարի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. մարտի 15-ին, ժամը՝ 14^{30}-ին
3. <<Լճաշենի ԱԱՊԿ>>ՊՈԱԿ - 2019թ. մարտի 19-ին, ժամը՝ 10^{30}-ին
4. <<Ծովագյուղի ԲԱ>> ՊՈԱԿ - 2019թ. մարտի 19-ին, ժամը՝ 14^{30}-ին
5. <<Դպրաբակի ԲԱ>>, ՊՈԱԿ - 2019թ. մարտի 20-ին, ժամը՝ 10^{30}-ին
6. <<Գեղամասարի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. մարտի 20-ին, ժամը՝ 14^{30}-ին
7. <<Լուսակունքի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. մարտի 21-ին, ժամը՝ 10^{30}-ին
8. <<Ծովակի ԱԱՊԿ>>, ՊՈԱԿ - 2019թ մարտի 21-ին, ժամը՝ 14^{30}-ին
9. <<Կարճաղբյուրի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. մարտի 22-ին, ժամը՝ 10^{30}-ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ...ՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ *08404767*